1574. Թվ. ՌԻԳ. Օգոստ. Դ. Նեմիչի դատաստանին դատաւորքն զՀայոց դատաստանն անփոյթ առնելով, և ոչինչ համարելով զթագաւորական տվեալ զտումարն և զհրամանն, և կալան զոմն Հայ երիտասարդ և գլխատեցին։ Պատճառն այս եղեւ, զի այս երիտասարդն Եագուպ անուն՝ որ էր Միխալին թոռն, զոմն առնակին սեղեխ ունելով՝ մտեալ էր առ կինն ի գիշերի. և այրն կնոջն կալաւ ի միատեղ, և բերեալ ի բաթուշն (դատաստանարան), զերկուքն այլ՝ զկինն և զերիտասարդն գլխատեցին։ Զոր այսպիսի բան բնաւ չէր եղեր, որ զՀայն՝ Նեմիչն դատէր կամ ի մահ դատապարտէր. և այս եղեւ վասն անթիւ մեղաց մերոց, մանաւանդ վասն անհոգութեան դատաւորացն։

1574. Թվ. ՌԻԳ. Թուրքի խոնտիքարն սուլտան Սէլիմ մեռաւ. ինն ամ թագաւորութիւն վայելեց, և փոխանակ նորա նստաւ որդին իւր սուլտան Մուրատն։

1574. Թվ. ՌԻԳ. Տէր Գրիգոր եպիսկոպոսն՝ որ էր Վանեցի, առ Աստուած փոխեցաւ ի յԸստամպօլն. զոր խռովեցաւ վերայ յԻլովցոց, և գընաց ի այս աշխարհէս. և էր եպիսկոպոսութեան նորա ամք 22, զոր եղեւ աթոռակալ այս աշխարհս, ի վերայ Իլովին և Կամենիցոյ։

1575. Թվ. ՌԻԴ. Հոկտ. ԺԲ, օրն երեքշաբթի։ Կամենից քաղաքն թաթար եկաւ, և շուրջ զքաղաքաւն շրջեցան ամբարիշտքն. և զամենայն գեղանն այրեցին հրով, զՏօլչքան և զՆովասելիցան և զԳօպոչովն, և զՍ. Լուսաւորչին զեկեղեցին Հայոց, և այլ շատ գեղանք. զոր և իսկոյն եկել էին բերդին ներքեւ և շուրջ զբերամբքն սապատակեալք, և ի մէջ քաղաքին նետաձիգ լինէին, անահ և աներկիւղ շրջելով։ Զոր էին հասեալ մինչեւ յԻլովն. և հազիւ ազատեցաւ քաղաքն. զի թէ թօբերով չընդդիմանային ընդդէմ նոցա, այլ և յԻլովին յետ անցել էին, շուրջ զգաւառաւն զամենայն ինչ հրով այրեցին. յԻլովէն մինչեւ ի Կամենից՝ տեղ ոչ թողին որ չգերեցան. և աւարեցին զմարդիք և զանասունս, որչափ ինչ կայր՝ զամէն սրբեցին, և հանին զերկրի բարութիւնս. այլ և մինչեւ ի Լուցքան՝ զԼիդվայի գաւառաւն և Վոլնին գաւառաւն և Բոտոլեային գաւառաւն, որչափ կարաց և ձեռն բաւեց՝ զամենայն ինչ տարաւ, անթիւ և անբաւ։ Եւ ելեալք գնացին և անցին զՏուրլուն, խոդինէն ի վայր, անվնաս զամենայն գերեալսն և զաւարն անցուցանելով այնկոյս գետոյն. այսպէս ելեալ գնացին անօրէնքն անահ և անկասկած։ Զոր այսպիսի համարձակութիւն անբարշտաց ոչ էր լեալ՝ որչափ Կամենից քաղաքն կանգնեցեալ կայր. զոր և ի մէջ քաղաքին շիւարեցան և տարակուսեցան. ամենեցուն ձեռքն լքան, և ամենայն անձն մարդոյ դողացան. և ոչ ոք իշխանաց կամ մեծամեծաց հնարք և ճարտարութիւն և կամ փոքր ի չատէ քաջութիւն ոչ ցուցին. և ոչ բնաւ ի անօրինաց կալան կամ սպանին, որպէս յերեկն և եռանդն կային այնպիսի ոմանք արք պատերազմողք և քաջասիրտք։